կալացուցիչներէն։ Պատրիարքարանիս կողմէ ներկայ էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։

● Եշ. 29 Հոկտ. — Կ. Վ. ժամը 3ին, Իսրայէլէն Ս. Աթոռ ժամանեց Հոգ. Տ. Բաբգէն Վրդ. Ապտեան և վերադարձաւ Կիր. 1 Նոյեմբերին։ Հոգ. Հայրը Յուլիս 16ին արձակուրդով մեկնած էր Եւրոպա և վերադարձած Իսրայէլ Հոկտ. 5ին։

---

## ՎԵՐԱՄՈՒՏ

### Ս. ԱԹՈՌՈՅՍ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

---

Յշ. 5 Հոկտ.ի առաւօտուն, Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեան ի գլուխ Միաբանութեան, պաշտօնական երթով գնաց Ժառ. Վարժարան կատարելու համար բացումը 1953-54 դպրոցական տարեշրջանին։ Վարժարանի մուտքին, Գեր. Ս. Հայրը դիմաւորուեցաւ Թար. Սարկաւագներէն և Ժառ. սաներէն, որոնք թափոր կազմած առաջնորդեցին Ն. Գերապատուութիւնը հանդիսասրահ ուր յետ Աւետարանի ընթերցման, Գեր. Սրբազանը տուաւ իր պատգամը աշակերտներուն, յորմէհետէ սկսան դասաւանդութիւնները կանոնաւոր ու յարատև աշխատանքով։ Ապա, Գեր. Սրբազանը նոյն թափորով առաջնորդուեցաւ Ս. Թ. Վարժարան։ Սրահին մէջ հաւաքուած էին ուսուցչական կազմն ու բովանդակ աշակերտութիւնը։ Գեր. Սրբազանը հոս ալ տուաւ իր պատգամը աշակերտութեան որմէ ետք դասաւանդութիւնները սկսան, ուսուցչական կազմին մէջ աւելցած նոր ու խոստմնալից ուժերով։

Այս առթիւ ուրախութեամբ կը յայտարարենք թէ այս տարի Ժառ. Վարժարանը կրցած է կազմել իր չորս դասարանները։ Պարագայ մը որ չէր իրականացած անցնող տասնամեակի ընթացքին։

---

## Ս. ԱԹՈՌՈՅՍ ԺԱՌ. ՎԱՐԺԱՐԱՆԸ

---

Գաղութներու մէջ օրէ օր, պատրաստուած կրօնականներու պէտքը զգալի կը դառնայ։ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը այս կարիքին առջև միշտ ունեցած է նկատառման արժանի արդիւնք։ Այս տարի Ս. Աթոռոյս Տնօրէն Ժողովի հրահանգով Ս. Ուխտիս Միաբաններէն Հոգ. Տ. Կիւրեղ Աբղ. Գաբրիկեան, Օգոստոս 31ին մեկնելով Սուրիա-Լիբանան, արձանագրեց ժառանգաւորաց վարժարանի համար 10 նոր սաներ։ Այս ձևով Ժառանգաւորաց վարժարանը կ'ունենայ 30 սաներ, որոնք բաշխուած են չորս դասարաններու վրայ և որոնց ուսումնական ծրագիրը կը համապատասխանէ երկրորդական վարժարաններու քառամեայ շրջանին։

Տեսչութեան հոգածու խնամքին և փորձ ուսուցիչներու ջանքերով Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանը վերսկսած է իր 1953-54 ուսումնական տարեշրջանը։

**Ժառանգաւորաց Վարժարանի Տեսչութիւնը իր խոր շնորհակալութիւնը կը յայտնէ Օրիորդ Սիրարփի Տէր Ներսէսեանին, որ 200 տոլարի առատաբուղխ նուէրով մը կը սատարէ Ժառանգաւոր սաներու նոր զգեստի շինութեան։**

Տեսուչ
Ժառանգ. Վարժարանի եւ Ընծայարանի
ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎՐԴ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

---

## Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՅԱՒԵԼԵԱԼ Է. ԴԱՍԱՐԱՆԸ

---

Ուրախութիւն է մեզ ըսել թէ 1953-54 տարեշրջանի համար Ս. Աթոռոյս Ս. Թարգմանչաց երկսեռ Նախակրթարանը իրեն կից ունեցաւ նաև տարիներէ ի վեր իրագործելի յաւելեալ դասարան մը որ կը համապատասխանէ երկրորդական վարժարանի first secondary կարգին։ Դասաւանդութիւնները կանոնաւորաբար սկսած են արդէն ու աշակերտները քիմիաբանութեան համար ունին փոքրիկ աշխատարան մը։ Կը յուսանք որ յառաջիկայ տարիներուն այս դասարանը ոչ միայն պիտի շարունակէ իր գոյութիւնը, այլ վարժարանը իր պատմութեան մէջ պիտի արձանագրէ նորանոր նուաճումներ։

---

## ՎԱՐԴՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ Տ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

Կիր. 25 Հոկտ.ի առաւօտուն, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Ուխտիս Մայրապետներէն Վարդուհի Մայրապետ Տէր Ներսէսեան։

Հանգուցեալ Վարդուհի Մայրապետ ծնած է Կիւրին, 1887ին։ 1926-1937 ծառայած է Մելքոնեան Կրթական Հաստատութեան մէջ որպէս հանդերձապետուհի և օգնական հիւանդապահուհի։ 1937 Դեկտ. 20ին մտած է Ս. Աթոռոյ ծառայութեան մէջ որպէս Մայրապետ։

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ նոյն օրը, առաւօտեան ժամը 10ին, և մարմինը ամփոփուեցաւ Ձամ-Թաղի գերեզմանատան մէջ։

Տէրը թող լուսաւորէ հոգին բարեպաշտուհի ննջեցեալին։

digitised by A.R.A.R.@